

տրուարի 1775, հանգուցեալ բարեյիշատակ Արքեպիսկոպոսն իւր կտակագրովն պարտաւորեց Եկեղեցւոյն ժամանակակից երեսփոխանքն որ իրմէ թողեալ ստացուածոց մեծագոյն մասին գումարն ծառայեցընեն իրեն հոգւոյն մշտնջենաւոր պատարագի միոյ մատուցմանն համար, եւ այն ի ձեռն հայազգի քահանայի միոյ մեր Եկեղեցւոյն մէջ ի լիվոռնոյ: Սահմանեալ գումարն էր 7840 Քրանք: Ի սկզբանն՝ յընթացս դարու միոյ ըստ պարտաւորութեան մատուցան ամենօրեայ պատարագք. բայց յետոյ մայրաքումարին պակասելովն՝ Պետութեան վճարեալ ծանր տուգանաց պատճառաւ, տնօրինեց Ս. Գահն, որ այնուհետեւ յիշեալ մշտնջենաւոր պատարագի պարտաւորութիւնն իւրաքանչիւր տարի միայն հարիւր պատարագաց մատուցմամբ վճարուի:

Նոյնպէս Եկեղեցւոյն աւագ խորանը համակ մարմարեայ շինուած է 1778ին սոյն կտակին համեմատ, եւ խորանին երկու կողմը դրուած է ճերմակ եւ դեղին մարմարիոնէ խառնեալ՝ Սարգսի Արքեպիսկոպոսի զինանշանը, որ տապանագրին տակն ալ կ'երեւայ: Սոյն զինանշանը Գերյ. Մեծաւոր Վ. բնական մեծութեամբ գծագրած ղրկած է ինձ, եւ ես նմանահանութիւնը կը դնեմ վարը բոլորովին պզտիկցուած:

Սոյն աւագ խորանին ճիշդ ետեւը այս առթիւ փորագրուած է հետեւեալ հայերէն եւ լատիներէն արձանագրութիւնը: